ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2016 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016թվականի մարտի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> N 219-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2013թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1).<<Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժին>>-ը լրացնել նոր՝ <<գլխավոր մասնագետ>> տողով.

2).<<Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժին >>-ից հանել 3-րդ տողը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ.մարտի 30
ք. Կապան